

[1] Դուրս գրման ամսաթիվ			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
30	Հունիս	2021 թ.		Բ	9345594325
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
30	Հունիս	2021 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՆՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	0	6	3	3	7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Այ՜ի Բանկ ՓԲԸ		N 11813000406200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 71 16							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՁԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման էներգա զուգահեռի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չարի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թարգմանչական ծառայություն՝ իսպաներենից հայերեն գրավոր	էջ	2.5	2400		6000
2	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից իսպաներեն գրավոր	էջ	17	2400		40800
<b>Ընդամենը</b>						46800

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ **HOVHANNISYAN SONA 5808870623**

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ **GRIGORYAN SUSANNA 7403690397**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

06.04.2021թ.

ք.երևան

«Վ» գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյանս, ուսումնասիրելով Արմեն Սերգեյի Բաղայանի վերաբերյալ «Վ» գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

02.04.2021 թ. «Վ» գլխավոր դատախազություն է ստացվել թիվ 62201310 քրեական գործով մեղադրյալ ԱՐՄԵՆ ՍԵՐԳԵՅԻ ԲԱԴԱՅԱՆԻ վերաբերյալ «Վ» արտաքին գործերի նախարարության N-1108-1/12425-21 գրությունը՝ կից փաստաթղթերով իսպաներեն լեզվով, որոնք անհրաժեշտ է թարգմանել հայերեն:

Համաձայն «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ «Վ»-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ իսպաներեն փաստաթուղթն անհրաժեշտ է թարգմանել հայերեն, իսկ *խաչատրյան Անին* համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են «Վ» Վճուրեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Արմեն Սերգեյի Բաղայանի՝ իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԻՆ (անձնագիր AM0897789, դիպլոմ AM N-004843) և նրան ծանոթացնել «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության դատախազ



Գ. Մելիքյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանադրվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Խաչատրյան Անի



«04. 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

05.05.2021թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Վ.Ասատրյան, ուսումնասիրելով թիվ 14172121 քրեական գործով մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն մեղադրական եզրակացությամբ ստացվել է թիվ 14172121 քրեական գործն ըստ մեղադրանքի Միշել Բենիտես Գոնսալեսի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1.1 մասով:

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Միշել Բենիտես Գոնսալեսը տիրապետում է իսպաներեն լեզվին, հետևաբար մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները անհրաժեշտ է նրան տրամադրել իսպաներեն լեզվով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Նկատի ունենալով, որ Միշել Բենիտես Գոնսալեսը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է իսպաներեն լեզվին, ուստի մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման հաստատված թարգմանությունները վերջինիս հասկանալի լեզվով նրան հանձնելու համար հայերենից իսպաներեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» ՍՊԸ թարգմանիչ Անի Խաչատրյանին /անձնագիր AM 0897789/, /դիպլոմ AM 004843/:

Նկատի ունենալով, որ Անի Խաչատրյանը տիրապետում է հայերեն և իսպաներեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 53-րդ և 83-րդ հոդվածով,


ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 14172121 քրեական գործով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման թարգմանությունն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» ՍՊԸ թարգմանիչ Անի Խաչատրյանին:

Անի Խաչատրյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Անի Խաչատրյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական  
շրջանների դատախազության ավագ դատախազ՝



Վ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արագա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Անի Խաչատրյան  
« 05 » 05 2021 թ.